**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2024թ. № 1160

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով Գեղասար բնակավայրի վարչական ղեկավար Վարազդատ Գրիգորյանի 2024թ հոկտեմբերի 14-ի զեկուցագիրը, Լուսաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար Արամայիս Հակոբյանի նոյեմբերի 4-ի զեկուցագիրը, Լեռնավան բնակավայրի վարչական ղեկավար Նելսոն Բեգլարյանի հոկտեմբերի 14-ի զեկուցագիրը, տնտեսվար Արթուր Միքայելյանի դեկտեմբերի 2-ի զեկուցագրերը, Գեղասար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի շենքի, Լուսաղբյուր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի շենքի, Լեռնավան բնակավայրի ժամանցի սրահի, Սպիտակի համայնքապետարանի շենքի համար տնտեսական ապրանքներ գնելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 37 380 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 3
ք.Սպիտակ